«Վոլտա» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

2022-07-06

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/330 Ա

06.07.2022

«Վոլտա» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների
փոփոխություններին համաձայնություն տալու մասին

Ուսումնասիրելով «ՎՈԼՏԱ» ՍՊԸ (այսուհետ՝ նաև գրավատուն) կողմից 2022 թվականի հունիսի 24-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությունները և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Համաձայնություն տալ «Վոլտա» ՍՊԸ գրավատան (լիցենզիա՝ թիվ ԳԳ-Ե097), (լիցենզիա՝ թիվ ԳԳ-Ե252), (լիցենզիա թիվ ԳԳ-Ե265) և (լիցենզիա՝ թիվ ԳԳ-Ե310) կողմից 2022 թվականի հունիսի 24-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ